ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք.Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. уч. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. st.Artcvacar, tel. (093) 19-66-68

էլ. փոստ arman-erem@mail.ru

№ 03-15/110

«09» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Դավթյանին

«ԻԶՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով «ՀՀ Տավուշի մարզի Արճիս համայնքի վերանորոգում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 6114.62 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 1 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«09» սեպտեմբերի 2015թ.
Տնօրեն՝
Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ «ՀՀ Տավուշի մարզի Արծիվ համայնքի դպրոցի վերանորոգում » աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ Տավուշի մարզպետարան　　　　Նախագծող՝ «ԻՁՆՍԽ» ՍՊԸ

Նախագծման հիմք է ծառայում Արծիվի գյուղապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

1-ին մասնաշենքի ճակատային մասի գոյություն ունեցող փայտե պատուհանների( 1,5x2,3մ չափի 12 հատ 1-ին հարկում, 12 հատ 2-րդ հարկում), ինչպես նաև գլխավոր մուտքի դռների (0,9x3,15մ չափի 2 հատ, 1,8x3,15մ 1 հատ) քանդում: Նոր տեղադրվող պատուհանները մետաղապլաստից են, իսկ արտաքին դռները ալյումինից: Փոխվող պատուհանների փայտե պատուհանագոգերի փոխարեն նախատեսված է տեղադրել պլաստմասե պատուհանագոգեր: Նախատեսվում է արտաքին շեպերի սվաղում ց/ավազե շաղախով, իսկ ներքինը գաջի շաղախով:

Ներկայացված է նախահաշիվ *6114,62* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիծիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից　- 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից　- 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից　- 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

*«ՀՀ Տավուշի մարզի Արծիվ համայնքի դպրոցի վերանորոգում »* աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *6114,62* հազ. դրամ. ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարապետ　　　　Մ. Աղդալյան

Գլխավոր մասնագետ　　　　Ա. Գրիգորյան